ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Մայիսի 19-ին Ն. Ի. Ռիժկովի նախագահությամբ տեղի ունեցավ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի ազգամիջյան հարաբերությունների հարցերի հանձնաժողովի նիստը։ Քննարկվեց վերջին ժամանակներս Լեռնային Ղարաբաղում և նրա առնչությամբ ստեղծված իրավիճակը։ Այդ հարցի առթիվ հաղորդումներով հանդես եկան ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկին, ինչպես նաև Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա.—Ռ. Խ. Վեզիրովը և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը։

Հանձնաժողովը նշեց, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թվականի հունվարի 12-ի «Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին» հրամանագիրը օբյեկտիվ նախադրյալներ ստեղծեց ԼՂԻՄ-ի հասարակական-քաղաքական, տնտեսական ու սոցիալական հարցերի լուծման համար։

Հատուկ կառավարման կոմիտեի աշխատանքի առաջին ամիսներին ուժեղացավ ինքնավար մարզի իրավունքների իրացումը, հետևողականորեն կենսագործվում էին կազմակերպական և իրավական որոշումները, որոնք նպատակամղված էին մարզի ինքնուրույնության ընդլայնմանն ու այն ռեգիոնալ տնտեսաշվարկի ընկզբունքի փոխադրելուն, Հայաստանի հետ մշակույթի ու կրթության ոլորտում ԼՂԻՄ-ի հայ բնակչության բազմապիսի կապերի խթանմանը, պատշաճ կերպով հաշվի առնելով նաև ադրբեջանական բնակչության շահերը։

Երկրում ստեղծված ոչ դյուրին տնտեսական պայմաններում ինքնավար մարզին լրացուցիչ հատկացվեցին զգալի միջոցներ։ 1987 թվականի համեմատությամբ ավելի քան կրկնապատիկ և 1988 թվականի համեմատությամբ ավելի քան քառապատիկ ավելացվեցին պետական կապիտալ ներդրումները։ Ընթացիկ տարում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի ռեզերվից ԼՂԻՄ-ը ստացավ հատկացված կերի մշակման համար զգալի քանակությամբ հացահատիկ, փայտե տներ, շինարարական-տրանսպորտային տեխնիկա։ Լրացուցիչ ռեսուրսներ տրամադրեցին նաև ԽՍՀՄ պետմատն ու ֆինանսների մինիստրությունը։ ԽՍՀՄ առևտրի մինիստրությունը էապես համալրեց ինքնավար մարզի շուկայական ֆոնդերը, որը հնարավորություն տվեց գրեթե

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քսան տոկոսով ընդլայնելու բնակչությանը ապրանքի վաճառքը: Հունվար-ապրիլին որոշ չափով ավելացավ արդյունաբերական արտադրանքի թողարկումը, մեկ քառորդով աճեց կենտրոնացված կապիտալ ներդրումների իրացումը: Պետական միջոցների հաշվին գործարկվեցին 6,7 հազար քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակելի տներ:

Սակայն ԼՂԻՄ-ի հասարակական ու տնտեսական կյանքում դրական միտումները մայիսի սկզբին ընդհատվեցին գործադուլի հետևանքով, որի մեջ ներգրավվեցին բնակչության որոշակի խավեր: Նրա մասնակիցներն առաջ քաշեցին մի շարք պահանջներ, որոնք կշռադատված քննարկման էին կարոտ: Դրա փոխարեն գործադուլի կազմակերպիչները ընտրեցին իշխանության մարմինների, ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի հետ առճակատման ուղին: Իրավիճակն սկսեց արագորեն վատանալ, բանը հասավ ազգամիջյան ընդհարումների: Այս կապակցությամբ քաղաքացիների անվտանգության նպատակով պահանջվեցին պարետային ռեժիմի սաստկացման լրացուցիչ միջոցառումներ:

ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովը նշեց, որ գործադուլի ուղին որպես ղարաբաղյան հարցի լուծման գործում պետական ու կուսակցական մարմինների վրա ճնշում գործադրելու ձև միանգամայն անհեռանկար է, ծանր վնաս է պատճառում բնակչության արմատական շահերին, ստեղծում է պայթյունավտանգ մթնոլորտ, անվստահություն և անբարյացակամություն բորբոքում ազգամիջյան հարաբերություններում:

Մեր բազմազգ պետության ժողովուրդների եղբայրական համերաշխության ու փոխըմբռնման պայմաններում, որն առանձնակի ուժով դրսևորվեց Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի ողբերգական հետևանքների վերացման ընթացքում, Լեռնային Ղարաբաղի իրադարձությունները շրջադարձ են դեպի ազգամիջյան երկպառակությունների վատթարագույն ժամանակներ: Այս բանը թույլ տալ չի կարելի: Կենսունակ ապագայի նկատմամբ հայ ժողովրդի հավատը, լինի դա Հայաստանում, թե Լեռնային Ղարաբաղում, պաշտպանվեց ամբողջ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների մեկնած բարեկամության ձեռքով:

Սի՞թե հիմա ուզում են վանել այդ ձեռքը, կոտրեն ենթարկվելով հույզերին և կորցնելով բանականությունը:

Անցյալի ինչ շերտաբաստվածքներ ու սխալներ էլ ճնշեն մարդկանց, Լեռնային Ղարաբաղի պրոբլեմները անհնար է լուծել բռնության միջոցով: Նման լուծման փորձերը անխուսափելիորեն կհանգեցնեին ողբերգական հետևանքների: Ելքը կարող է գտնվել միայն փոխըմբռնման և խելամիտ փոխզիջումների միջոցով:

ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովն ընդգծեց այն բանի անհրաժեշտությունը, որ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն հետևողականորեն ու հաստատակամորեն կատարի մարզի հասարակական-քաղաքական իրադրության նորմալացման իրավակարգի և քաղաքացիների անվտանգության ապահովման, ձեռնարկությունների անխափան աշխատանքի կազմակերպման, բնակչության կենսական պահանջմունքների բավարարման գործում իր վրա դրված պարտականությունները: Նպատակահարմար համարվեց ընդլայնել հատուկ կառավարման կոմիտեի լիազորությունները՝ ելնելով սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների ավելի արդյունավետ լուծման, ինտերնացիոնալիստական հիման վրա աշխատավորների համախմբման շահերից:

Իհարկե, դա չի վերացնում Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտրոնական կոմիտեների պատասխանատվությունը Լեռնային Ղարաբաղի շուրջն ստեղծված քաղաքական և գաղափարախոսական մթնոլորտի առողջացման համար: Նրանց առաջնային խնդիրն է աշխատանքային սերտ կոնտակտներ հաստատել իրար միջև, ապահովել փոխգործակցություն ծագող հարցերի լուծման գործում և միասնական ճակատով հանդես գալ հակավերակառուցական ուժերի դեմ, որոնք խարխլում են Խորհրդային Հանրապետությունների Միությունը, ազգամիջյան բախումներ հրահրող ամեն տեսակ գործողությունների դեմ:

ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովը միութենական և հանրապետական մինիստրությունների ու գերատեսչությունների ուշադրությունը հրավիրեց հատուկ կառավարման կոմիտեի կողմից ընդունված առաջադրվող հարցերի օպերատիվ քննարկման անհրաժեշտության վրա: Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ մինիստրների խորհուրդներին առաջարկվեց էականորեն ակտիվացնել այն քաղաքացիների պրոբլեմը լուծելու իրենց գործողությունները, ովքեր ստիպված հեռացել են մշտական բնակության վայրերից և հայտնվել են ԼՂԻՄ-ի տարածքում: Պետք է բացառվեն իշխանության տեղական մարմինների իրավունքների խախտումները՝ ում կողմից էլ որ լինի:

Ներկա իրադրության մեջ մեծ պատասխանատվություն է դրվում երկու հանրապետությունների և ԼՂԻՄ-ի մասնաբաժնի ինֆորմացիայի միջոցների վրա, որոնք չպիտի թույլ տան որևէ նացիոնալիստական, հրահրիչ դրսևորում, հիշելով, որ իրենց գլխավոր խնդիրն է ըստ ամենայնի նպաստել իրադրության առողջացմանը:

ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովը հատկապես ընդգծեց, որ ինքնավար մարզի բոլոր կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների, բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության ջանքերը այժմ պետք է նպատակամղված լինեն կյանքի նորմալ ռիթմի վերահաստատմանը, այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք հնարավորություն տան առաջ մղել վերակառուցումը ի շահ ամբողջ երկրի, ամբողջ խորհրդային հասարակության:

(ՏԱՍՍ)